ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՊԱՏԳԱՄԸ

Նոր լոյս ծագեց աշխարհին.
Ո՞վ այդ արեւը բերեց։-

Ահա ոսկեայ մի արեւ
Ճառագումով մի հրէ
Այգաբացի պուրպուրէ
Նժոյգների վրայ հեց
Նոր աշխարհին ու մարդուն
Յղում է լոյս զուարթուն։
Նոր աշխարհին ու մարդուն
Ո՞վ բերեց լոյսն այս արթուն.
Օ՜, ո՞ւմ ձեռքով վառուեց ո՞ւմ
Հրակարմիր, հրավարս,
Ադամանդեայ լոյսը այս։-

Կքած կեանքի բեռի տակ,
Խոր գերութեան ընդերքում,
Իմաստութեան մի գետակ
Յիմարութեան համերգում -
Քանի՜ տարի, քանի՜ դար
Վկայեցիր անհերքում ...
Ափերին այն խաւարչտին,
Ուր հայրենիքն էր մեր հին, -
Չկա՞ր արդեօք գետ մի յորդ,
Որ գերութեան անհաղորդ
Լուրթ հոսելով դարից-դար
Մթութեան մէջ այն յամառ

Այս այգաբացն էր կրում,
Հուր այգաբացն այս հեռու՝
Հնուց պահած իր ջրում
Օ՜, ըղձական այս հեռուն ...։
Կքած կեանքի բեռի տակ՝
Ոգի՜ անկոր, հո՜ւր գետակ ...

Ահա վառում է մեր նոր
Յաղթանակի լոյսը բորբ.
Լանում է նա հիմա
Վառվող ոգին մեր անմահ.
Չքնաղ արե՛ւն այդ արի.
Վառուած հրով աշխարհի ...։
Չկայ ուրիշ արեւ էլ.
Նա է միայն, որ դարեր
Անմար պիտի արեւէ ...

Լոյսով վառուած սակայն այդ
Նժարներից հիմա մենք
Յիմարութեամբ չթափենք
Իմաստութիւնն այն արար, -
Մեր անցեալի խորամիտ
Է՛ջն այն արդար ու ռամիկ
Մեծահանճար ու վարար ...

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

«Գիրք Ճանապարհի» 1933 Մայիս 9

digitised by A.R.A.R.@